ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԵԿԵՂԵՑԻ.

—Ս. Սինոդը մերժել է Վրաստանի և Իմերէթի Սինոդական դրասենեակի միջնորդութիւնը՝ թոյլ տալու Թիֆլիսի պրավոսլաւ հոգևորականութեան անդամագրուել Թիֆլիսի Ռուսական փոխադարձ վարկի ընկերութեան, որովհետև, թէև այդ ընկերութիւնը համակրելի նպատակ ունի ծաղկեցնել ռուսական արդիւնաբերութիւնը, բայց նորա գործունէութեան հիմքը, ինչպէս և այլ նման ընկերութիւնների, է վաճառականական շահը և այլ դրդումներ, որոնք չեն համապատասխանում քահանայական կոչման և հովուական պաշտօնին։

—Տիւրէնչէնեան կռուի հերոս Ստեփան Շչէրբակովսկի քահանան պատերազմի ժամանակ, երբ արդէն կռուի դաշտում ընկել էին գունդի սպաները, խաչը ձեռքին թշնամու սարսափելի կրակի տակ կարողացել է յաջողութեամբ ազատել գունդը։ Ներկայումս իրբև աւագ քահանայ Մայր Թագուհի Մարիա Ֆեոդորովնայի Գավալերաղարդ գնդի, ծառայում է գործող բանակում և ցոյց է տալիս մեծ քաջութիւն։ Մասնակցելով բոլոր կռիւներում՝ ուղեկցում է զօրքին, սուրբ հաղորդութիւնն է բաշխում բոլոր վիրաւորներին և մեռնողներին։ Իւր քաջութեանց համար Շչերբակովսկի աւագ քահանան վարձատրուել է Վլադիմիրի 3-րդ աստիճանի շքանշանով սրերով։ Հայր Շչերբակովսկին ռուսաց քահանաների մէջ միակն է՝ որ ունի սպայական Գէորգի շքանշանը, որ ստացել է Տիւրէնչանսկի կռուի առթիւ։

Առ հասարակ քաջութիւն գործող և կռուի դաշտում ռուս անձնուէր քահանաների թիւը շատ է և նրանք վարձատրւում են իրենց հովուական ճշմարիտ պարտականութիւնները անձնազոհութեամբ կատարելու համար։

—Վարշաւայի Նիկոլայ արքեպիսկոպոսը ներկայացրել է ս. Սինոդին մանրամասն տեղեկագիր իւր թեմի այն եկեղեցիների մասին, որոնք փնասուել են պատերազմի պատճառով։ Այսպէս օրինակ, Գրաևի ծխական եկեղեցում մոմի արկղը կոտրել են և դրամ չգտնելու պատճառով տարել են 50 ռ. մոմ։ Եկեղեցական ծխական դպրոցը, քահանայի բնակարանը և շրջակայ տները գերմանացոց ձեռքով քարուքանդ են եղել և բոլորովին կողոպ-

տուել։ Տեղական զինուորական եկեղեցին քանդուած է, և պատարագի սեղանի վրայ էլ գտել են մահճակալ։ Նոյն աւերածութիւնը գերմանացիները արել են Կալվարայի քաղաքի եկեղեցում, եկեղեցում գերմանական զօրքերը ծխել են և թափել ամեն բան անկարգ կերպով։

Պրուշկով գիւղում եկեղեցին և հիւանդանոցը քանդել են և դրամարկղերը բաց անելով տարել են 60 ռ.։

Սուվալկայում գլխաւոր տաճարին սկզբում ձեռք չեն տուել գերմանացիք, բայց յետոյ կասկածելով որ այնտեղ պահուած են կօզակ զինուորներ՝ շրջապատել են և պատրաստուել փախչող կօզակներին խփել, յետոյ տեսնելով որ այնտեղ չեն պահուած կօզակներ, մտել են տաճարը և այնտեղ սարքել հիւանդանոց։ Գերմանացիների նահանջից յետոյ գտել են այդ տաճարը շատ անկարգ վիճակում, ամեն բան իրար տուած և թափթփած ծխած ծխախոտներ։

—Խոլմսկի թեմի հոգաբարձութիւնը առանձին կոչով դիմել է բոլոր այն տեղերին, որոնք չեն ազատուել պատերազմից, և խնդրել իրենց ազատուած թեմի հաստատութիւնների համար օգնութիւն։

—Ս. Սինոդը իւր դեկտեմբերի նիստերից մէկում լսել է Պետրոգրադի թեմի թեմական տեսչի զեկուցումն, որով խնդրել է Սինոդից կարգադրել վերացնել «ՏՕՆԱԾԱՌ»ի սովորութիւնը, որ իւրաքանչիւր տարի Նոր տարուայ առթիւ դպրոցներում սարքում են աշակերտների ու աշակերտուհիների համար, պատճառաբանելով՝ որ այդ սովորութիւնը մտել է գերմանացիներից և ռուսական չէ։ Սինոդի ուսումնարանական խորհուրդը վճռել է յարգել թեմական տեսչի միջնորդութիւնը և միաժամանակ կարգադրել է Պետրոգրադի միտրապոլիտութեան բոլոր դպրոցներում վերացնել ՏՕՆԱԾԱՌԻ սովորութիւնը։

—Ս. Սինոդը որոշել է հրամանագրել բոլոր թեմական առաջնորդներին, որ իրենց թեմերում գտնուած օրիորդաց դպրոցներում թոշակ չպահանջեն այն աշակերտուհիներից, որոնց հայրը պատերազմ է գնացել և իրենք չքաւորութեան պատճառով չեն կարող վճարել։

Հոգեւոր ատեանների նոր նախագիծը. Ս. Սինոդը իւր առաջիկայ նիստերից մէկում պէտք է զբաղուի հոգեւոր կոնսիստորիաների և հոգեւոր դատարանի նախագծի քննութեամբ։

Մինչև այժմ կոնսիստորիան ներկայացել է միակ հաստա-

տութիւնը թեմական հոգևոր կառավարութեան, որ վարել է և՛ վարչական և՛ դատական գործերը։ Կոնսիստորիաների այդ երկուութիւնը վաղուց ճանաչուել է անհամապատասխան կեանքի պահանջներին։ Նոր նախագծով վճռուած է վերացնել կոնսիստորիաները և հիմնել երկու բոլորովին ինքնուրոյն հաստատութիւններ. 1) թեմական դատարան և 2) թեմական կառավարութիւն։

Թեմական դատարանը կազմուում է թեմի քահանաներից, որոնք իրենց պաշտօնի մէջ հաստատուում են ս. Սինոդի կողմից, ընտրուում և հաստատուում են թեմական առաջնորդի կողմից դատարանի անդամների թուից։ Այն հանգամանքը, որ նախագահը ներկայանալով բարձր անձն հոգևոր աստիճանով, հաստատուում է առաջնորդից, իսկ դատարանի անդամները Սինոդից, այդ առաջ է գալիս նորա համար, որ ըստ կանոնական օրէնքների անյարմար կլինէր, եթէ նախագահին էլ հաստատէր առաջնորդը, քանի որ թեմում երևան կըգար առաջնորդի երկիշխանութիւնը։ Դատախազի պարտականութիւնները կատարող անձն հոգևոր դատարանում չէ լինելու, ինչպէս և չի լինիլ մեղադրող բաժանմունք, մեղադրողի դերը կը կատարի դատարանի անդամներից մէկը, որը նոյն գործի վճռահատութեան ժամանակ մասնակցութիւն չի ունենալ։ Դատարանի բոլոր վճիռները հաստատում է առաջնորդը. որն և կարող է յանցաւորներին յանձնել դատի։

Թեմական դատարանի իրաւասութիւնից կըհանուի որոշ գործեր և կը յանձնուի գործակակալական դատարանին, որ ներկայացնում է ստորադրեալ դատական ատեան, որ պէտք է ունենայ խաղաղարար դատարանի բնաւորութիւն։ Դատարանի ատենադպիրը նշանակուում է համաձայնութեամբ Սինոդի դատախազի և առաջնորդի։ Ատենադպիրը ներկայանում է դիւանատան կառավարիչը և հսկում է օրէնքների ճիշտ գործադրութեան վրայ։ Այս հոգևոր դատարանների վճռի դէմ բողոքել կարելի է ս. Սինոդին։

—Համաձայն Մոսկուայի թեմի հոգևորականութեան առանձին յանձնաժողովի միջնորդութեան ս. Սինոդը կարգադրել է բաժանել Մոսկուայի հիւանդանոցներում տեղաւորուած վիրաւոր զինուորներին 500,000 Ռուբլուարան։

Սեմինարիաների աշակերտների հայրենասիրութիւնը. Մոսկուայի հոգևոր Սեմինարիայի 2-րդ դասարանի սանները իրենց վարչութեան ցանկութիւն են յայտնել, որ մինչև դեկտեմբեր անցնեն վրճատուած դասընթաց, աւարտման քննութիւն տան և ապա գնան պատերազմ, իբրև կամաւորներ։ Սեմինարիայի տեսուչը այս մասին դիմել է ս. Սինոդի հաճութիւնը խնդրելու։

—Տավրիկեան հոգևոր Սեմինարիայի աշակերտները իրար մէջ ժողովում են շաբաթ, թէյ, դրամ գործող բանակն ուղարկելու համար։ Նոքա ութն օրերի երրորդ տեսակ կերակրից հրաժարուել են և խնդրել որ նորա արժէքը ուղարկուի Թեմական Յանձնաղովին։ Բարձր դասարանի սաներն յաճախ զօրանոցներում զինուորների հետ ունենում են կրօնական-բարոյական զրոյցներ և պատմական—հայրենասիրական ընթերցումներ։

—Պերմսկի Սեմինարիայի սաներն իրենց քաղաքում գտնուած վիրաւոր զինուորների համար կազմում են գրական-երաժշտական երեկոներ։ Այդպիսով զինուորների և սաների մէջ հաստատուում է բարոյական ուժեղ կապ։

—Մագիլևի Սեմինարիայի սաները կազմակերպել են «Սեմինարիական սանիտարական կամաւորների խումբ» բաղկացած 80 հոգուց, որոնց պարտականութիւնն է կայարանից վիրաւորներին հասցնել հիւանդանոց։ Այդ սաներից 70 հոգի վառուած հայրենասիրական հոգով, ցանկութիւն են յայտնել գնալ գործող բանակը իբրև կամաւոր սանիտարներ։

—Կալուգայի Սեմինարիայի սաները որոշել են ամեն օր իրենց ստանալիք հացի մի մասից զրկուել, իսկ արժէքը յատկացնել յօգուտ վիրաւորների։ Իւրաքանչիւր ամիս ժողովում են 115 ռուբլի և ուղարկում յօգուտ վիրաւորների։ Այդ սաներից կազմուած է առանձին հոգաբարձութիւն նախագահութեամբ Վերատեսչի, որ խնամք տանեն պատերազմ գնացած և վիրաւոր զինուորների ընտանիքների մասին։

ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Բենեդիկտ XV Պապի առաջին թուղթը. Անցեալ նոյեմբերի 1-ին (ն. տ.) Բենեդիկտ XV-րդ Պապը հրատարակել է իւր առաջին թուղթը՝ ուղղուած կաթոլիկ աշխարհի բոլոր եպիսկոպոսներին, որի մէջ նա արտայայտել է իւր մտքերն ու զգացմունքը ներկայ քաղաքական կեանքի տխուր կացութեան մասին, և մատնանշել է իւր ապագայ եկեղեցական գործունէութեան գլխաւոր խնդիրները։ Իւր առաջին խօսքը նուիրում է այն զգացմունքի նկարագրութեան, որ նա սաստիկ տպաւորուել է՝ երբ ինքը կոչուած լինելով ժառանգել Ս. Պետրոսի գահը՝ լսել է Տիրոջ խօսքերը «Արածեա զգառինս իմ... արածեա զոչխարս իմ» (Աւետ. Յովհ. 15—17) և այդ խօսքերի ազդեցութեան տակ հայեացք է ձգել իւր բազմաթիւ հօտի վրայ, որ համարեա, նորա կարծիքով, բաղկացած է բոլոր մարդկանցից։ Այդ զգացմունքը նորա մէջ եղել է